Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

Մ. ՈՎՉԻՆՆԻԿՈՎ

# ՀՈՒՇԱՏԵՏՐ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

*Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք*

Մ. ՈՎՋԻՆՆԻԿՈՎ

# ՀՈՒՇԱՏԵՏՐ
# ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ
# ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ

H 24393

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

1934
ՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ

Թարգմ. Հ. Աճեմյան
Խմբագր. Գրաչիաս
Սրբագր. Ա. Տ.-Մկրտչյան
Հրատ. № 2936
Գլավլիտ № 1173 (բ)
Պատվ. № 151, Տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 16 մայիսի 1934 թ.
Ստորագրված է տպելու 2 հունիսի 1934 թ.

---

Պետհրատի տպարան, Ալլահվերդյան, 27

*Մ. ՈՎՉԻՆՆԻԿՈՎ.—«Հուշատետր ճարտարագիտական հետախուզության» գրքույկը տալիս է ցուցումներ այն մասին, թե ինչի համար և ինչպես է կատարվում ճարտարագիտական հետախուզությունը։ Նշված աղյուսակները կօգնեն այս հուշատետրից օգտվողներին՝ ձեռքի տակ չեղած միջոցների, նյութերի և բանուժի պահանջվող քանակի մասին հաշիվներ կազմելու՝ ճարտարագիտական զանազան տեսակ աշխատանքներ կատարելու համար։*

*Այս հուշատետրը ԲԳԿԲ ճարտարագիտական զորքերի կրտսեր հրամանատարական կազմի համար է. հուշատետրը կարող է օգտագործել նաև հետևակի, հեծելազորի և այլ հրամկազմը։*

## ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Տեղանքը և նրա վրա գտնված տեղական առարկաները, այն է՝ կառուցվածքները, անտառները, գետերը, ձորակները և այլն, մեծ նշանակություն ունեն զորքերի մարտական գործողությունների ժամանակ։ Տեղանքը կարող է մեր զորքերին թաքցնել հակառակորդի կրակից և դիտողությունից։ Նա կարող է մեծացնել մեր կրակային միջոցների ուժը և մեր կրակը դարձնել ավելի դիպուկ։ Տեղանքը նույնպես կարող է օգնել կամ արգելք հանդիսանալ մեր զորքերի առաջխաղացմանը և կռվի տեխնիկական միջոցների օգտագործմանը. այն է՝ հրետանու, զրահապատների, տանկերի օգտագործմանը և այլն։

Վորպեսզի տեղանքը չխանգարի մեր զորամասերի գործողություններին և նույնիսկ օգնի նրանց, դրա համար կատարում են տեղանքի ճարտարագիտական սարքավորում։

Դրա համար կատարում են քողարկային աշխատանքներ և կառուցում են խրամատներ, վորոնք թաքցնում են մարտիկներին հակառակորդի աչքից և պաշտպանում են նրա կրակից։ Հակառակորդի առաջխաղացումը դժվարացնելու համար կառու-

ցում են խափանումներ և կատարում են ավերումներ։ Ընդհակառակը, մեր զորքերի առաջխաղացումը հեշտացնելու համար կառուցում են կամուրջներ, վերանորոգում են գետի հուներ, գցում են ճանապարհներ, անջրդի վայրերում փորում են ջրհորներ և այլն։

Այսպիսով՝ տեղանքի ճարտարագիտական սարքավորումը մարտում նպաստում է հաջողությանը։ Զորքերի համար չափազանց կարևոր են տեղանքի մասին անհրաժեշտ տեղեկությունները, նրա համար, որպեսզի ժամանակին նրանք միջոցներ ձեռք առնեն վերացնելու համար գոյություն ունեցող արգելքները և կատարեն այն աշխատանքները, որոնք պահանջվում են շարժումը հեշտացնելու համար և հակառակորդի դիտողությունից, կրակից և ԹՆ-ից պաշտպանվելու համար։ Այս տեղեկությունները հավաքելու համար է, որ կազմակերպվում է ճարտարագիտական հետախուզություն։

Ճարտարագիտական հետախուզությունն ուսումնասիրում է տեղանքը և ցույց է տալիս, թե ինչպիսի պաշտպանողական, ճանապարհային-կամրջային, պայթուցիկ, քողարկային, հիդրոտեխնիկական և այլ աշխատանքներ պետք է կատարել, որոնց համար քան միջոցներ, ուժ և ժամանակ են պահանջվում։ Այս տեղեկությունները լրացվում են համապատասխան հաշվարկներով, չափումներով և գծանկարներով։ Այն բոլորը, ինչ որ չի կարելի արտահայտել գծանկարում (օրինակ՝ գետինը, գետի հոսանքի արագությունը, կամուրջի սարքինության աստիճանը և այլն), ցույց է տրվում հատուկ նկարագրության մեջ— լեգենդայի մեջ և գրանցվում է հատուկ աղյուսակների մեջ։

Այսպիսով՝ ճարտարագիտական հետախուզությանն առաջադրվում են բարդ պահանջներ։ Ահա թե ինչու հետախույզը պետք է լավ իմանա իր մասնագիտությունը, պետք է կարողանա կարդալ քարտեզները և հեշտությամբ կողմնորոշվել տեղանքում։

## ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ճարտարագիտական հետախուզություն կարելի յէ կատարել ընդհանուր-զորական հետախուզության հետ միասին կամ

ընդհանրույն կերպով (ընդհանուր-զորային պետի հատուկ հանձնարարությունների համաձայն), կարող են կատարել ճարտարագիտական պետի անձամբ (հրամանատարական հետախուզություն), հետախուզական պարեկները—խմբերը և ավելի մանր խմբակները (2—3 մարդ)։

Սովորաբար հետախուզական խումբը գլխավորում է հրամանատարական կազմի անձ, իսկ խմբակը գլխավորում է ջոկի հրամանատար։ Խմբերի կամ խմբակների կազմն ու թիվը փոփոխվում են առաջադրության բնույթով, հետախուզության օբյեկտների քանակով, ժամանակով և հետախուզության ենթակա ռայոնի մեծությամբ։

Եթե հետախուզական խումբը կամ խմբակը մտնում է ընդհանուր-զորային հետախուզության կազմի մեջ, այն ժամանակ նրանք ենթարկվում են ընդհանուր-զորային հետախուզության պետին։

Ճարտարագիտական հետախուզության խնդիրները կարող են լինել երկու տեսակ. ա) հետախուզության հետևակի կամ հեծելազորի հետախուզությանն օգնելու և այն լրացնելու համար (պաշտպանողական շերտի հետախուզություն) կամ բ) նեղ մասնագիտական հետախուզություն (կամուրջի, ճանապարհների, աշխատանքների վայրի և այլն հետախուզություն)։ Հետևակի կամ հեծելազորի հետախուզությանն օգնելու և այն լրացնելու նպատակով հետախուզության ժամանակ ճարտարագիտական հետախույզների հավաքած բոլոր տեղեկությունները, առաջին հերթին, պետք է հայտնել ընդհանուր-զորային հետախուզության պետին, իսկ նեղ մասնագիտական հետախուզության ժամանակ—ճարտարագիտական այն պետին, որն ուղարկել է այդ հետախուզությունը, և միաժամանակ հետախուզության պետին։

Յուրաքանչյուր հետախուզական խումբ կամ խմբակ խնդիրներ է ստանում այն պետից, որը հետախուզության է ուղարկում, որը միաժամանակ տալիս է ուղղությունները ու շերտերը տեղական առարկաներով, մարշրուտները (ընթացուղիները) և ցույց է տալիս հետախուզության ճիշտ օբյեկտները։ Առաջադրությունը տալու ժամանակ ցույց է տրվում.

1) խնդիրը՝ պարզ ձևակերպված.
2) առաջադրության կատարման ժամանակը.

3) ինչպես պետք է կազմել տեղեկագիրը (բանավոր, գրավոր, ինչ գծանկարներ են հարկավոր և այլն).

4) զեկուցագրերը տեղ հասցնելու ձևերը.

5) ում և վորտեղ ուղարկել կամ հանձնել զեկուցագրերը:

Ստացված առաջադրությունը պետք է կատարել ճշտորեն և ժամկետին: Ամենափոքր ուշացման դեպքում անգամ տեղեկությունները կարող են կորցնել իրենց արժեքը և, բացի դրանից, կարող են դժվարացնել այն պետի գործողությունները, վորն սպասում է այդ տեղեկություններին:

Հետախուզության ժամանակ հաճախ կարիք է լինում գործ ունենալ բնակչության հետ. հարցուփորձի ժամանակ չափազանց զգույշ պետք է լինել ռազմական գաղտնիքը չհայտնելու համար: Գրանցումները, գծանկարները, սխեմաները խնամքով պետք է պահել:

## ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Տեղանքի հետախուզությունը կատարվում է հետևյալ ձևերով.

1) պլաններով և քարտեզներով.

2) հարցուփորձի միջոցով.

3) դիտողությամբ.

4) տեղանքն անձամբ զննելու միջոցով:

Յուրաքանչյուր հետախուզությունից առաջ պետք է ուսումնասիրել քարտեզը: Մեծ մասշտաբի քարտեզի վրա կարելի յե ստանալ սկզբնական անհրաժեշտ տեղեկությունները (մասնավորապես չափել, գնահատել հետախուզության ոբյեկտի ընդհանուր նշանակությունը և այլն) և քարտեզի վրա նշել հետախուզության տվյալները: Համենայն դեպս, այս ձևը լիակատար չի և ճիշտ պատկերացում չի տալիս տեղանքի մասին, վորովհետև [illegible] [illegible] քարտեզը կարող է հնանալ: Տեղանքը մշտապես փոփոխվում է. շենքեր են կառուցվում, [illegible] և կտրատվում են անտառները, կառուցվում են նոր ճանապարհներ և կամուրջներ, չորացնում են ճահիճները և այլն: Բացի դրանից, փոքր մասշտաբի քարտեզը չի տալիս տեղանքի բոլոր մանր ծալքերի պատկերացումը, վորոնցից յուրաքանչյուրը մարտում կարևոր նշանակություն ունի:

Տեղական բնակիչների հարցաքննությունը հետախուզության միայն օժանդակ տեսակն է։ Հետախուզության այս ձևը հաճախ կօգտագործվի, յերբ անհրաժեշտ է ստանալ մի շարք տեղեկություններ, ինչպիսիք են՝ հուների, անտառային ճանապարհների լինելը և այլն։ Այսպես թե այնպես, տեղական բնակիչները, վորքան էլ նրանք ցանկություն ունենան, ամեն անգամ չեն կարող մասնագիտական հարցերի վերաբերյալ տեղեկություններ տալ։ ինչպես, օրինակ՝ կամուրջի բեռնատարության (грузоподъемность) մասին, վերանորոգման աշխատանքների ծավալի մասին և այլն։

Այս դեպքում կպահանջվի անձնական զննություն և հետախուզություն։ Բացի դրանից, հետախույզի համար անհայտ բնակիչների հաղորդած տեղեկություններին պետք է շատ զգույշ վերաբերմունք ցույց տալ և ստուգել այդ տեղեկությունները տեղական բջիջի և գյուղխորհրդի միջոցով, յեթե կան այդպիսիները, և այլն։ Այսպիսով՝ յերկրորդ ձևը հուսալի ձև չէ, վորովհետև բնակիչներին հարցափորձի յենթարկելու միջոցով չի կարելի լիարժեք տեղեկություններ ստանալ տեղանքի ու տեղական առարկաների մասին։

Յերրորդ ձևը գործադրվում է մարտական պայմաններում, յերբ հնարավոր չէ անմիջապես զննել հետախուզության օբյեկտը, ինչպես, օրինակ՝ հակառակորդի ամրացրած շրջանի ուսումնասիրության ժամանակ։

Չորրորդ ձևն ամենից ավելի՝ վստահելի և գնահատելի յե, վորովհետև այդ ձևը հնարավորություն է տալիս մանրամասն ուսումնասիրել տեղանքը։ Այդ ձևի օգնությամբ նույնպես կարելի յե ուղղել քարտեզը և կազմել նոր գծանկար (կրոկի)։

Այսպիսով՝ հետախուզության ամենալավ և հուսալի ձևն է տեղանքի անձամբ զննումը։

## ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հետախուզության վերաբերյալ առաջադրությունը կատարելուց հետո անմիջապես պետք է զեկուցել այդ մասին պետին և հանձնել նրան բոլոր նյութերը։

Զեկուցագրերը հետախուզության արդյունքների մասին կարող են լինել բանավոր (բանավոր զեկուցում) և գրավոր

ներկայացնելով բոլոր նյութերը (գծանկարներ, սխեմաներ, աղյուսակներ, նկարագրություն)։

Զեկուցագրեր ներկայացնելու ժամանակ պահանջվում է.

1. Ժամանակին տեղ հասցնել, վորովհետև ուշացած տեղեկությունները կորցնում են իրենց նշանակությունը։

2. Բացատրության համառոտություն։ Ամեն ինչ նշվում է քարտեզի, սխեմայի, գծանկարի վրա և միայն այն, ինչ չի կարելի պատկերել գծագրի ձևով, նշվում է նկարագրության մեջ։

3. Ներկայացվող տեղեկությունների ճշտություն։ Անհաստատ կամ սուտ տեղեկությունները կարող են գործին մեծ և հաճախ անուղղելի վնաս հասցնել։

4. Տեղեկությունները պետք է համապատասխանեն տվյալ առաջադրությանը։ Ներկայացվող տեղեկությունների մեջ պետք է պատասխանել միայն այն հարցերին, վորպիսի հարցեր հրամայված է պարզաբանել։

5. Գրանցել միայն գլխավորն ու էականը, առանց ավելորդ մանրամասնությունների, վորոնք հաճախ ծանրաբեռնում են զեկուցագրերը։

## ՏԵՂԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

### ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՆ ՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Ճանապարհների և կամուրջների հետախուզության ժամանակ պետք է վորոշել նրանց դրությունը, անցանելիությունը և զորքերի թաքուն շարժման հնարավորությունը։ Կամուրջների հետախուզության ժամանակ պետք է պարզաբանել նաև թույլատրելի առավելագույն բեռնավորումը։

Ճանապարհները։ Ճանապարհների հետախուզության ժամանակ հետախույզը պետք է տա հետևյալ տեղեկությունները.

1. Ճանապարհի հետախուզության յենթակա տեղամասի յերկարությունը։ Յերկարությունն արտահայտել կիլոմետրերով։ Հետախուզությունը կատարվում է մի տեղամասից դեպի մյուսը կողմնորոշներով (որիենտիրներով), վորոնք նշված են քարտեզում։

2. Ճանապարհի վոլորապտույտները։ Ճանապարհի վոլոր-մոլոր լինելն ազդում է ավտոտրանսպորտի շարժման արագության վրա և նվազեցնում է ճանապարհի զննելիությունը։

3. Դիտողությունից և զնդակոծումից ծածկվածությունը *(լեռների վրա, օդից)*:

4. Ճանապարհի կողմերի տեղանքը: *Սովորաբար պետք է նկարագրել ճանապարհից աջ ու ձախ ընկած 400 — 600 մետր լայնության շերտը:*

5. Ճանապարհի յերեսի (полотно) լայնությունը իր կողերով: *Պետք է գծանկար ներկայացնել (ճանապարհի պրոֆիլը), ցույց տալով անիվներով անցնելու մասի չափերը, կողնակների* (обочина), *խրամատների (կյուվետների) չափերը մետրերով:*

6. Ճանապարհի գետինը: *Այն ճանապարհների համար, վորոնց անիվներով անցնելու մասը չունի պատվածք* (одежда), *ցույց է տրվում, թե ինչպիսի գետին է (ավազոտ, բուսահողոտ, կավային, ճահճային և այլն): Յեթե ճանապարհի մակերեսույթը ամրապնդված է, այն ժամանակ պետք է ցույց տալ, թե ինչով է ամրապնդված (ճախերով, յեղեգնով, ծղոտով, չփիներով):*

*Պատվածքով ճանապարհների համար (խճուղի, քարե սալահատակ, փայտե) ցույց է տրվում պատվածքի նյութը ու հաստությունը:*

7. Ճանապարհային յերեսի դրությունը ներկայումս և տարվա մյուս ժամանակներին *(մանավանդ աշնանը, յերբ ամենից շատ անձրևներ են գալիս):*

8. Անցանելիությունը *(ինչպիսի բեռների համար): Ցույց է տրվում համառոտ ձևով. — ճանապարհներն անցանելի յեն չոր (ամառային) ժամանակ գնդային (դիվիզիական, կորպուսային) բոլոր բեռների համար, ճանապարհի ամբողջ յերկարության վրա կամ ինչ տեղամասում:*

9. Վարեջքներ, վերելքներ և ոլորաններ. Նրանց յերկարությունը ու զառիվայրությունը (крутизна): *Ուղղորդ վարեջքներն ու վերելքները դանդաղեցնում են տրանսպորտի և հրետանու շարժումը և հաճախ բանվոր ուժի կարիք են զգում: Ճանապարհների համար վերջնական թույլատրելի թեքությունն է 15°:*

*Թեքությունը վորոշելու համար, բացի թեքաչափից, օգտվում են նաև նշանաձողից: Ամենամեծ յերկայնակի թեքությունը, վոր թույլ է տրվում գնդայինների համար, հավասար է՝ 0,06, յերբ տեղամասի յերկարությունը 200 մետր է (հարթ տեղանք) և 0, 07, յերբ տեղամասի յերկարությունն է 500 մետր (բլրավետ տեղանք): Հարթ տեղանքում կլորացման ամենափոքր շառա-*

վիզն և 30 մետր սովորական շարժման համար և 50 մետր մեքենայացված տրանսպորտի համար։

10. Ճանապարհի եզրերով օրջանցումներ: Ցույց տալ ճշտաբորբեր՝ վիրաժը։

11. Ճանապարհից դուրս գալը։ Եղակի նշանակությունն[ ]անի գումարների և հրետանու շարժման համար։

12. Արհեստական կառուցվածքներ (կամուրջներ, խողովակներ, փոսեր, հողաթմբեր)։

13. Վերանորոգման աշխատանքների անհրաժեշտությունը և նրանց ծավալը: Ցույց է տրված աշխատանքների բնույթն ու տեղը, այլև հերթականությունը։

1-ին հերթ. ա) անիվներով անանցանելի տեղերի շրջանցումներ կառուցելը. բ) լճացած ջրերի և խրամներից ջուրն անցնելու համար առուներ շինելը. գ) ճանապարհները մաքրելը ցեխից. դ) ջրատար խրամների ուղղումը. ե) փոսերի լցնելն ու խորդուբորդ տեղերի հարթելը. զ) ճանապարհի նեղ տեղերը լայնացնելը. է) կամուրջների վրայի մասերի ու յուղի մասերն ուղղելը. ը) անիվներով ու ձիով անցնելու համար վտանգավոր տեղերի ցանկապատումը (արգելաններ (надолбы), ցանկի մի մաս) և ճանապարհի ցուցիչներ դնելը։

2-րդ հերթ. ա) երկայնական թեքության թեթևացումը. բ) ճանապարհային երեսքի ամրացումը. գ) ջրհոսքը և դրենաժի լավացումը. դ) ճեղանցքների վերանորոգումը։

Վերանորոգման աշխատանքների հաշիվն անելու համար պետք է օգտվել № 1 աղյուսակից։

14. Վերանորոգման աշխատանքների համար պահանջվող նյութի քանակը: Ինչ նյութ է հարկավոր և ինչ քանակությամբ։ Որտեղից վերցնել այդ նյութը։ Նյութը տեղ հասցնելու հնարավորությունը։ Նյութն աշխատանքների վայրը տեղափոխելու միջոցներն ու եղանակները (տրանսպորտ)։

Այն դեպքերում, երբ ճանապարհների հետախուզությունը կատարվում է փչացնելու և ավերելու նպատակով (նահանջի դեպքում), ցույց են տրվում ամենից հարմար և արագ եղանակները՝ վերոհիշյալ աշխատանքները կատարելու համար։

Փչացնելու եղանակները. փորել, վարել, քարերով լցնել, փշավոր առարկաներ շաղ տալ (ապակի, մեխերով տախտակներ, փշալարեր, փշալարից գալարներ (սպիրալներ)։ Կառուցել փու-

*ջրանցքի կույտեր, մեծ ու փոքր ձորակներ պայթուցիկ նյութե-րով։ Ճանապարհները փչացնելու հետ միաժամանակ քանդել կա-մուրջները և խողովակները։ Ավերումն ու փչացումը պետք է կատարել ամենից ավելի կարևոր վայրերում՝ ճեղանուղիների վրա, ամբարտակների, դիք սարալանջերի վրա, ձորերում, բարձր հողաթմբերի վրա, խորը փորվածքում և կիրճերում։*

*Ոչնչելու հարմարության համար ճանապարհների հետա-խուզության վերաբերյալ վերահիշյալ բոլոր տեղեկությունները արվում են առանձին աղյուսակի ձևով (տես աղյուսակ № 2)։*

Ծանոթություն։ *Դժվար անցնելի ճանապարհները քարտեզի վրա պետք է նշել կարմիր կետագծերով (պունկտիրով), իսկ անցանելիները—դարչնագույն կետագծերով։*

**Ճանապարհային կառուցվածքներ։** *Ճանապարհային կառուց-վածքներին են վերաբերում կամուրջները, խողովակները, վա-քերը (ЛОТОК), ջրէջքները։ Սրանց հետախուզությունը կատար-վում է ճանապարհների հետախուզության հետ միասին։ Ճանա-պարհային կառուցվածքների հետախուզության ժամանակ կցվում է նաև գծանկարը՝ հնարավոր նկարագրությամբ, որի մեջ պետք է մտնեն հետևյալ տեղեկությունները.*

1. Կամուրջի տիպը և բացվածքների (пролет) թիվը։

2. Կամուրջի և բացվածքների երկարությունը, կամուրջի՝ ջրի մակերևույթից ունեցած բարձրությունը ու լայնությունը։ *(Կամուրջի երկարությունը չափվում է ափի հաստարանների* (устой) *առանցքների միջև, լայնությունը—բազրիքների միջև։)*

3. Հենասյուների թիվը, հենասյուների մեջ եղած ցցերի քանակը։ *Գլխավոր բաղկացուցիչ մասերի չափերը (ցից, վրադիր, վրաքաշի քովթորներ* (переводина)*։*

4. Կամուրջի դրությունը, հենասյուների ամրությունը *(չեն թեքվել արդյոք)* և վերևի կազմի ամրությունը։

5. Կամուրջի համար բեռնատարի վերջնական բեռնատարողությունը *(տես աղյուսակ № 3)։ Մեր քաղաքացիական այն կամուրջներից, որոնք հաշվված են 6 տոնն բեռան համար, ազատ կարող է անցնել փոքր տանկը, իսկ այն կամուրջներից, որոնք հաշվված են 9 տոննի համար, կարող է անցնել մեծ տանկը (Վիկկերսի)։*

6. Ինչ աշխատանքներ են պահանջվում կամուրջը նորոգելու կամ ուժեղացնելու համար *(կազմել ցուցակ, ցույց տալ աշխատանքների ծավալը)։*

7. Կամուրջից վերցնել նյութը (*տեղը և հեռավորությունը*)։ *Փոխադրության միջոցները (տրանսպորտի հաշիվը)։*

8. Կամուրջի մասին դրությունը՝ *կա՞ արդյոք կամուրջին մոտիկ շրջանցման ճանապարհ, այն դեպքում, յերբ փչանա կամուրջը, վորտեղ և ինչ հեռավորության վրա։*

9. Նկատառումներ նոր կամուրջներ կառուցելու մասին։ *Ցույց է տրվում տեղը, նյութով ու տրանսպորտով ապահովելու հնարավորությունը։ Նոր կամուրջներ կառուցելու նորմաները տրված են № 4 աղյուսակում։*

*Կամուրջների հետախուզության ժամանակ, յեթե այդ կատարվում է կամուրջները փչացնելու կամ վոչնչացնելու նպատակով, ցույց են տրվում, թե ինչպիսի միջոցներով և յենթադրվում կատարել վերոհիշյալ աշխատանքը.—կամուրջները կարելի յե քանդել ձեռքով—այրելով. մեքենաներով (տրակտորով, ապրանքատար ավտոմոբիլով)—վերևի կողմը քանդել-տանելով, վառելով և պայթեցնելու միջոցով։ Պայթուցիկ նյութերի հաշիվը անելու ժամանակ կոպիտ հաշվով վերցվում է մեկ գծամետր յերկարություն ունեցող կամուրջի համար 1—2 կիլոգրամ ՊՆ (պայթուցիկ նյութեր)։ Մեկ գծամետր կամուրջի աշխատանքների համար պահանջվում է 1—2 սապյոր։*

*Աշխատանքի հեշտության և հարմարության համար ճանապարհների և ճանապարհային կառուցվածքների մասին բոլոր տեղեկությունները ներկայացնում է ճարտարագիտական հետախուզությունը աղյուսակի ձևով (տես № 2 աղյուսակը)։*

*Հակառակորդի կողմից փչացրած ճանապարհների ու ճանապարհային կառուցվածքների հետախուզության ժամանակ ճարտարագիտական հետախուզությունը հայտաբերում է.*

1. *Փչացման կամ քանդվածքների տեղերը։*

2. *Ինչ ավերումներ կամ ինչ փչացում է կատարվել. որինակ՝ կամուրջն ամբողջովին վառված է, ականված է, սղոցված է, պայթեցված է մեկ բացվածքը (մեկ «աչքը») և այլն. ճանապարհը հերկած է, փորփրված է, ձագարներ են պատրաստել, ականել են, լցված են ծառերով, քարերով, փշալարով և այլն։*

3. *Կատարված ավերումների քանակը (ծավալը)։*

4. *Կա՞ն արդյոք շրջանցիկ տեղեր։*

5. *Ժամանակի, նյութերի և տրանսպորտի կոպիտ հաշիվը վերականգնման աշխատանքները կատարելու համար։*

6. Կան արդյոք նյութեր կամ վորտեղից վերցնելու նյութերի տեղափոխության հնարավորությունն ու միջոցները։

## ԱՆՏԱՌԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Անտառային մասսիվների հետախուզությունը կատարվում է՝ ա) պաշտպանության նպատակով, բ) այդ մասսիվները վորպես մասսայական օգտագործելու նպատակով, գ) հայտաբերելու համար, թե կան արդյոք պաշտպանողական և ճանապարհային աշխատանքները կատարելու անհրաժեշտ նյութեր (մասնակի դեպքը), դ) խափանումների նպատակով, ե) զորքերը կենտրոնացնելու նպատակով։

Անտառային մասսիվները կարևոր նշանակություն ունեն մարտում։ Նրանց օգտագործում են զորքերը վորպես բնական քողարկիչներ և հենակետեր։ Անտառը վորպես հենակետ հետախուզելու ժամանակ վորոշվում է.

1. Եզերքի բնույթը (հարթ տեղ, լանջ, վոր կողմն է դարձած լանջը)։

2. Եզերքի ձևերն ու ուրվագծումը։

3. Մասսիվներն ու ճանապարհները, վորոնք տանում են դեպի անտառը, և նրանց դրությունը։

4. Անտառում ճանապարհների լինելն ու նրանց անցանելիությունը։

5. Անտառի տեսակը, նոսր, խիտ, բարձր, ցածր, հեշտ անցանելի կամ դժվարանց։ Ծառերի հաստությունը։ Ինչ քանակությամբ նյութ կարելի յե պատրաստել պաշտպանողական և ճանապարհային աշխատանքների համար։

6. Հողային ծածկույթը, գետինը, գետնաջրերի մոտիկությունը։

7. Ճանապարհների ցուցիչները, պահպանակները և մյուս կողմնորոշիչները։

8. Ուղիների առկայությունը, բացատների և նրանց օգտագործելու հնարավորությունը պաշտպանության համար։ Ճահիճները, աղբյուրները։

9. Քողարկվածությունը օդային դիտողությունից։

10. Խափանումների տեղերն ու բնույթը։

Անտառը վորպես մասսայի հետախուզելու ժամանակ պետք է վորոշել.

ա) անտառի խտությունը (անտառի խտությունն ազդում է անտառի օգտագործման վրա՝ վորպես քողարկ օդային դիտողությունից, այլև ազդում է շարժման և գնդակոծման վրա).

բ) ճանապարհների, արահետների առկայությունը և նրանց անցանելիությունը.

գ) բացատների և ուղատների առկայությունը.

դ) ինչ չափով է անտառը յենթակա օդային դիտողության։

Անտառի հետախուզության ժամանակ, յերբ հետախուզության նպատակն է նյութեր հավաքերելը, պետք է վորոշել.

ա) անտառի տեսակը (փշատերև, սաղարթավոր (лиственный), խառը, կաղնու և այլն).

բ) ծառերի բարձրությունը.

գ) ծառի խոտորնակի կտրվածքի տրամագիծը սանտիմետրերով կրծքաչափ բարձրության վրա.

դ) նյութի հատկությունը (հավասար, ծուռ վոստերով (կոճղերով) և առանց վոստերի).

ե) ինչ նպատակների համար կարելի յե օգտագործել (շինարարական, վորպես վառելափայտ և այլն).

զ) կա՞ն արդյոք անտառանյութը դուրս բերելու ճանապարհները և նրանց պիտանիությունը.

է) ինչ քանակությամբ անտառանյութ կարելի յե պատրաստել մեկ հեկտարից։

Զորքեր կենտրոնացնելու համար անտառի հետախուզության ժամանակ պետք է վորոշել.

ա) քողարկվածությունը օդային դիտողությունից.

բ) ճանապարհների գոյությունը հրետանու և զրահամեքենաների շարժման համար.

գ) հնարավոր խափանումները.

դ) քողարկային անհրաժեշտ աշխատանքները։

Խափանումների նպատակով անտառի հետախուզության ժամանակ պետք է վորոշել.

ա) խափանումների տեղը.

բ) խափանումների բնույթը։

## ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրերը կարող են ծառայել՝

ա) վորպես հենակետեր.

*բ) փորվածք շտաբների դասավորման վայրեր, նույնպես և կարող են ծառայել զորքերի ժամանակավոր տեղավորման և հանգստի համար։*

*Բնակավայրը փորված հենակետ օգտագործելու դեպքում ճարտարագիտական հետախուզությունը պետք է տա հետևյալ տեղեկությունները.*

1. Գյուղի, փորված հենակետի՝ ամբողջ տակտիկական նշանակությունից։ Դասավորման ձևը.—*հարթ տեղ է, լանջի վրա չէ, դեպի հակառակորդի կողմն է ընկած, հակառակ լանջի վրա չէ (առաջին դեպքում գյուղի դասավորումը ամենից ձեռնտու է)։ Կան արդյոք մատույցներ դեպի գյուղը ճակատի կողմից, թևերի կամ թիկունքի կողմից։*

2. Մայրամասերի հատկությունները *(ամուր կառուցվածքների առկայությունը, քարե պատնեշներ և այլն)։*

3. *Այն նյութը, որից կառուցված են շինությունները (փայտ, քար)։*

4. *Պաշտպանության և դաշտապաշտպանության համար* ծայրամասերը և առանձին շինությունները հարմարեցնելու հնարավորությունը։

5. Ջրով ապահովված լինելը։

*Գյուղերի հետախուզության ժամանակ, բացի դրանից, տեղեկություններ պետք է հավաքել տեղական միջոցների մասին (շինանյութերի, նրանց քանակի, գործիքների մասին), այլև բանվորների և արհեստավորի մասին։*

*Բնակավայրի հաշվառման ժամանակ պետք է ցույց տալ աշխատունակ արտադրողների և կանանց թիվը, նրանցից մասնագետներին՝ հյուսներ, դարբիններ, փականագործներ, փորձագետներ, խողարկիչներ և այլն։*

*Բնակավայրերը հետախուզելու ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ դասակարգային կազմը և տեղական բնակիչների վերաբերմունքը դեպի Կարմիր բանակը։ Շինանյութերի և գործիքների մասին տեղեկությունները (քանակը, որակը, ում է պատկանում) ավելի լավ է ստանալ գյուղխորհրդում (եթե այդպիսին կա)։*

*Զորքերի տեղավորման համար բնակավայրի հետախուզության ժամանակ պետք է հայտաբերել.*

1. *Տների քանակը։*
2. *Շենքերի պիտանիությունը զորքերի տեղավորման հա-*

մար։ Քանի մարդ կարելի է տեղավորել շենքերում։ Շենքերը որպես պաշտպանական հարմարեցնելու հնարավորությունը։

3. Ջրի առկայությունը։

4. Զինկազմն ու գումակները տեղավորելու հնարավորությունը։

Գյուղերի ճարտարագիտական հետախուզության ամբողջ նյութը կազմում են նրա պլանն ու բացատրագիրը։

## ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅԻ ՏԱՐԲԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մարտի համար տեղանքի ճարտարագիտական սարքավորումը կախված է տակտիկական պարագայից և պետք է ընդունած վճռից։ Այդ պատճառով ճարտարագիտական հետախուզության խնդիրները ունեն իրենց առանձնահատկությունները, նայած մարտական պարագային։

### *ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ԵՐԹԻ (ՄԱՐՇԻ) ԺԱՄԱՆԱԿ ԻՐ ԶՈՐՔԵՐԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ*

Երթի ժամանակ ճարտարագիտական զորքերի հիմնական խնդիրն է՝ ապահովել զորքերի անընդհատ շարժումը ճանապարհներով. ահա թե ինչու ճանապարհների հետախուզությունը հանդիսանում է ճարտարագիտական հետախուզության գլխավոր պարտականությունը։ Ճարտարագիտական հետախուզության առաջադրանքների մեջ են մտնում.

ա) այն ճանապարհների հետախուզությունը, որոնք նշված են զորքերի շարժման համար.

բ) այդ ճանապարհների վրա ընկած կամուրջների հետախուզությունը.

գ) նոր ճանապարհներ որոնելը (արահետներ, զորասյունային ճանապարհներ, ճահիճների միջով անցնելու տեղեր, անտառ և այլն).

դ) արգելքների ու խոչընդոտների վերացումը, որոնք կարող են հանդիպել շարժման ճանապարհին (ձորակներ, ճահիճներ, գետեր, ավերակներ, ծառաթափեր ճանապարհների վրա, որոնք գո-

յունում են ուղեկից ձգած ռումբերի պայթյունից, թունավորված տեղամասեր, քանդված կամուրջներ).

ե) այն պայմանների հայտնաբերումը, վորոնք նպաստում կամ դժվարացնում են առաջշարժման ծածկվածությունը (շարժման քողարկումը), վորտեղ, ինչ տեղերում։

Ճանապարհների հետախուզությունը կատարվում է նախօրոք քարտեզով, իսկ հետո ճշտվում է զորքերի շարժման ժամանակ կամ, յեթե հնարավոր է, առաջուց։

## ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ

Նախահեռնության գրավումը—արագ առաջխաղացումը (հակառակորդին կանխումը) բնորոշում է մարտի այդ տեսակը։ Ընդհանուր-զորքային պետի վճիռ ընդունելու առնչությամբ ճարտարագիտական հետախուզությունը պետք է վորոշի.

1) ճանապարհների և ճանապարհային կառուցվածքների առկայությունը (կամուրջներ, խողովակներ և այլն), նրանց վիճակը.

2) բնական արգելքների (գետեր, լճեր, ճահիճներ, ձորակներ, խիտ անտառ և այլն) և արհեստական արգելքների (խափանումների) առկայությունը, վորոնք կարող են հանդիպել զորքերի շարժման ճանապարհին, և նրանց հաղթահարելու միջոցները.

3) վորտեղ և ինչպիսի աշխատանքներ կատարել դիտակետերի սարքավորման տեսակետից։

Գործողությունների (ոպերացիաների) արագ ընթացքը, մարտական փոփոխվող պարագան և այլն, հազիվ թե հնարավորություն տան դրանից ավելի տեղեկություններ հավաքել։

## ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՐԱՑԱԾ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Վորևէ բնագծում կանգնած հակառակորդը, վորը դեռ ժամանակ չի ունեցել ստեղծելու ուժեղ ամրացրած շերտ, ժամանակակից տեխնիկայի պայմաններում միշտ կարող է իր տրամադրության տակ ունենալ վորոշ միջոցներ, վորոնց ոգնությամբ նա կարող է պաշտպանողական շերտի առջևում արագորեն ստեղծել խափանումներ (կրծքի արհեստական արգելքներ, ինքնա-

գործ ականներ, անակնկալներ, թակարդներ և այլն)։ Հակառակորդի ամրացրած շերտի ճարտարապետական հետախուզությանը նախորդում է շերտի առջևի յեզրի առաջընկած տեղանքի հետախուզությունը։ Այս հետախուզությունը վորոշում է.

1) Արգելքների տեղերն ու բնույթը, առանձնապես հակատանկային արգելքների (ականային դաշտեր)։

2) Կրակի կառուցվածքները։

Բացի դրանից, սահմանվում է մեր զորքերի համար աշխատանքների ծավալը (դիտակետերի և հրամանատարական կետերի սարքավորումը, քողարկային աշխատանքներ և այլն)։

Հակառակորդի ամրացրած շերտի հետախուզության ժամանակ պետք է վորոշել.

1) Հակառակորդի շերտի ամրության ընդհանուր բնույթը, հայտաբերելով ամենից ուժեղ ամրացված ու քողարկված տեղամասերը։

2) Ամրությունների մանրամասնությունները (պաշտպանողական կառուցվածքների դասավորման տեղը և բնույթը)։ Խրամատների և խրամուղիների դասավորումը։

3) Ամրացրած շերտի ներսում յեղած խափանումների տեղերը, խափանումների ուժն ու բնույթը։ Ամենից թույլ ամրացրած տեղամասերը՝ ճեղքվածք առաջացնելու դեպքի համար։ Բացի դրանից, տրվում են նաև այլ տեղեկություններ ընդհանուր-զորական հետախուզության հետ միասին։

Բուն հետախուզությունը կատարվում է վորոնումներով (գիշեր ժամանակ), մշտական դիտողության միջոցով (ցերեկը) և վերջապես կատարվում է մարտի միջոցով։ Արհեստական արգելքները հետախուզելու ժամանակ անհրաժեշտ է ցույց տալ.

ա) **Լարափակոցները.** տիպը (փոխադրելի, մշտական), տեսակը (ցանկապատ, խաչափայտ հենաններ՝ ցածր ցցերի վրա, կեղծ, էլեկտրականացված և այլն), քանի շարք է, նյութը (փշալար, հարթ լար)։

բ) **Հակատանկային արգելքներ** (փոսեր, խրամներ, արգելաններ, ականներ, և այլն)։

Արգելանների դեպքում հարկավոր է վորոշել այն նյութը, վորից նրանք շինված են (փայտե, յերկաթե), շարքերի թիվը, նյութի հաստությունը, արգելանների և շարքերի միջև հեռավորությունը. ճակատի յերկարությունը՝ փոսեր և խրամներ յեղած ժամանակ—լայնությունը, խորությունը, քանակը, յերկարությունը ճակատով. ականներ յեղած ժամանակ—դրած տեղերը,

նրանց պայթյունի ուժը, ականների տեսակը (կոնտակտ, ճնշումից գործող)։

Առանձին ականների դրած տեղերը և ականային դաշտերը որոշվում են ապաքողարկային հատկանիշներով (թարմ բացված հող, տարբեր գետին)։ Եթե ականներ են դրված ավազոտ գետնի մեջ, այն ժամանակ յերբեմն հարկ է լինում հայտաբերել նրանց, տնտղել հողը հրացանի շամփուրով և առանձին զոնդոցով (щуп)։ Ականային դաշտերը, սովորաբար, պաշտպանվում են պաշտպանողական շերտի առջևի յեզրի առաջ 200—500 մետր հեռավորության վրա։

գ) Արգելածառներ (засеки)։

Յերկարությունը, խորությունը։ Արգելանոցի ուժը (պարուրված և լարով, ականված և)։

Դեպի արգելանոցը տանող ուղիները հաճախ ականված են լինում այնպիսի ականներով, վորոնց գործողության համար հաշվի յի առված մարդու քաշի ծանրությունը։ Այդ պատճառով ականները վորոշելու համար անհրաժեշտ է խնամքով զննել այդ տեղերը։ Եթե կան ձգողիչներ, թելեր, միշտ կարելի յե վորպես հատկանիշ համարել, վոր արգելանոցն ականված է։ Վերոհիշյալ հատկանիշների բացակայությունը հիմք չի տալիս կարծելու, թե արգելանոցն ականված չէ։ Վորպես կանոն, արգելանոցները և հողալիցքերը միշտ ականված կլինեն։

## ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Մարտից դուրս գալու ժամանակ յերկու կողմերն էլ լայնորեն կոգտագործեն խափանումներն ու ավերումները՝ հարձակվող կողմը—շրջապատելու նպատակով, իսկ նահանջող կողմը—հարձակվողին կասեցնելու համար։

Մարտից դուրս գալը լինում է հակառակորդի ճնշման տակ կամ նրա համար հանկարծակի՝ կանխամտածված ձևով։

Առաջին դեպքում ճարտարագիտական հետախուզությունը հազիվ թե գործադրվի ժամանակի սղության պատճառով,—հետախույզները կարող են օգտագործվել միայն վորպես ականորդներ նահանջող զորամասերի համար, յեթե տեղանքը թեկուզ քամ-ականված է։

*Երկրորդ դեպքում հետախուզությունը հետ քաշվելուց առաջ վաղորոք վորոշում է, թե ինչպիսի աշխատանքներ են անհրաժեշտ կատարել՝ շտկելու համար ճանապարհները, կամուրջները, պատրաստելու համար լրացուցիչ անցարաններ և հնարավոր խափանումներ։*

## ԳԵՏԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐՏ ՄՂԵԼՈՎ ԳԵՏԸ ԲՌՆԱԶԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Հետախուզության նպատակն է՝ վորոշել անցարանի հնարավորությունն ու տեղերը, զորքերն ափ իջեցնելու և կամուրջներ կառուցելու տեղերը, ինչպես նաև անցարանին մոտենալու և նյութեր փոխադրելու ուղիները։ Անցարանները պետք է բավարարեն մարտական այն պահանջներին, վոր առաջադրվում են անցարաններին։ Այդ պահանջները հետևյալն են.*

*ա) մեր ափը պետք է իշխի հակառակորդի ափի վրա. բ) գետի անցարանը տանող մատույցները պետք է գնդակոծվեն ըստ հնարավորության խաչաձև կրակով. գ) անցարանի ռայոնի տեղանքը պետք է հնարավորություն տա քողարկվելու. դ) գետի անցարանները տանող ուղիները պետք է ազատ լինեն, բայց ծածկված հակառակորդի դիտողությունից և կրակից. ե) անցարանի առջևում և նրա հետևում պետք է հարմար տեղեր (ռայոններ) լինեն անցարանական գույքը տարածելու և կենտրոնացնելու համար. վերջապես՝ զ) անցարանը պետք է ապահովվի ճանապարհների բավարար քանակով՝ անցարանին մոտենալու և գույքն այդտեղ փոխադրելու համար։*

*Անցարանի լավագույն տեղը համընկնում է գետի պտույտի, վորը դարձված է դեպի մեր կողմը։*

*Գետի հետախուզությանը կցվում է գետի և հարակից հովտի սխեման կամ մեծացրած քարտեզը, ճշտորեն նշանակելով այն տեղերը, վորոնք հարմար են անցնելու համար։*

*Հետախուզությունը պետք է տա հետևյալ տեղեկությունները.*

1. Գետի լայնությունն ու խորությունը, հոսանքի արագությունը, հատակը։ *Լայնությունը վորոշվում է յերկրաչափական (նման յեռանկյունիների կառուցում) կամ յեռանկյունաչափական միջոց-*

ներով, պարանով։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել լայնության չափերի ճշտության վրա։ Հոսանքի արագությունը չպետք է միջակից ավելի լինի և վորոշվում է լողանի օգնությամբ։ Հոսանքը թույլ է համարվում, յերբ արագությունը 0,5 մետր է մի վայրկյանում, միջակ է համարվում, յերբ 0,5—1 մետր է մի վայրկյանում և արագ է համարվում, յերբ 1—2 մետրից ավելի յե։ Գետի հատակի լավագույն գետինը համարվում է պինդ գետինը։

2. Բերուկներ (каносы), ծանծաղուտներ, ճուներ, ատամնաձև արգելքներ (քարեր, ցցեր)։ Ցույց են արվում դրանց գտնված տեղերը։

*Հունի խորությունը հրետանու և գումակների համար պետք է լինի վոչ ավելի քան 0,70 մետր, հետևակի համար—1 մետր, հեծելազորի համար—1,20 մետր, թեթև տանկերի համար—վոչ ավելի, քան մեկ մետր։ Հուների օգտագործմանը պետք է վերաբերվել մեծ զգուշությամբ, վորովհետև նրանք մեծ մասամբ ականված կլինեն։ Քարերը, ցցերը արգելք են հանդիսանում գետով անցնելուն, յեթե նրանք թաքցված են ջրի տակ, և ընդհակառակը, յերբեմն հեշտացնում են շարժումը, յեթե ջրի յերեսին յերևում են, վորովհետև կարող են ծառայել վորպես միջնական հենարաններ։*

3. Գետի ափերը և յերկու կողմում ընկած տեղամասերը։ *Ցույց է տրվում, թե ինչպիսի ափեր են—զառիվեր կամ ուղղորդ (ուղղորդ ափեր յեղած ժամանակ կպահանջվի վարէջքեր կառուցել)։ Ափերի իջնումը և տեղանքի բնույթը (թաքնված, բաց)։*

4. Անցումային կառուցումների գոյությունը *(նավահանգիստներ, ջրարգելակներ, ամբարտակներ, կամուրջներ)։*

5. Տեղական միջոցների և նյութերի առկայությունը։ *Ցույց է տրվում, թե ինչպիսիներն են նրանք (նավակներ, լաստանավեր, լաստեր), նրանց քանակը, վորակը, բեռնատարությունը, գտնված տեղը, ճանապարհները և փոխադրության միջոցները։*

6. Ձեռքի տակ յեղած միջոցներ ու նյութեր։ *Տեսակը, քանակը, գտնված տեղը։ Ձեռքի տակ յեղած միջոցներ են՝ տակառներ, տաշտեր, գերաններ, ջախեր (խռիվ), յեղեգներ և այլն։*

7. Գետի հովիտը (գծագրությունը), ուղղորդությունը և ափերի գծերը։ *Անցարանին անխնդրով մոտենալու հնարավորությունները։ Դիտողությունից ծածկվածությունը։*

8. Հովտին կից տեղանքը։ *Նրա ռելյեֆը, գետինը և թաղնվածությունը։ Այնպիսի ճանապարհներ լինելը, որոնք դեպի գետն են տանում և անցնում յերկայնությամբ։*

9. Լրացուցիչ աշխատանքների անհրաժեշտությունը *(ինչպիսի աշխատանքներ)։*

*Գետի պաշտպանության ժամանակ, բացի վերոհիշյալ տեղեկություններից, առանձին ուշադրություն պետք է դարձնել՝*

*ա) Կամուրջներ, հուներ, տեղական և ձեռքի տակի միջոցներ լինելու վրա։*

*բ) Նահանջի ճանապարհների և նրանց քողարկման վրա։*

*գ) Կամրջային, ճանապարհային և մյուս լրացուցիչ այնպիսի աշխատանքների անհրաժեշտության վրա, որոնք ապահովում են մեր զորամասերի ժամանակին հետ քաշվելը։*

*դ) Այն միջոցառումների վրա, որոնք դժվարացնում են հակառակորդի՝ գետն անցնելը (գետի խափանումներ, հուների, հովտի, ափին կից տեղանքի խափանումներ)։*

*ե) Տեղանքը ջրով հեղեղելու կամ ճահճացնելու հնարավորությունը։*

*Հավաքած բոլոր տեղեկությունները գրանցվում են աղյուսակի մեջ (տես աղյուսակ № 5)։*

## ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*Պաշտպանության ժամանակ ճարտարագիտական հետախուզության խնդիրն է տեղեկություններ հավաքել ճարտարագիտական առաջիկա աշխատանքների մասին (պաշտպանողական, հիդրոտեխնիկական, ճանապարհային, կամրջային, պայթեցման, քողարկման և այլ աշխատանքների մասին) և անհրաժեշտ նյութերի, գործիքների, տրանսպորտի համար պահանջվող բանուժի մասին։*

*Պաշտպանողական այն շրջանի հետախուզության ժամանակ, որտեղ յենթադրվում է պաշտպանողական աշխատանքներ կատարել, հարկավոր է հաշվի առնել նաև այն բոլոր աշխատանքները, որոնք կապված են թիկունքների պատրաստության հետ, այսինքն՝ հաղորդակցության ճանապարհների ապահովումը, թի-*

կոնկրետային ճանապարհների նշումը՝ վորպես հետ քաշվելու ճանապարհներ, զորքերին տեղավորելու համար շենքերի, ջրի ապահովումը և այլն։

*Տեղանքն ու տեղական առարկաները պաշտպանության ժամանակ այլ նշանակություն են ստանում, քան հարձակման ժամանակ, և այլ կերպ են գնահատվում։ Հատուկ կարևոր նշանակություն ունեն խափանումները և ճարտարագիտական պաշտպանության միջոցները։ Այդ պատճառով առաջընկած տեղանքը, ճանապարհները, ջրային արգելքները հետախուզվում են, նպատակ ունենալով կառուցել խափանումներ.—կամուրջները՝ նախակամրջյան ամրություններ կամ ավերումներ ստեղծելու համար. գետերի և գետակների հովիտները՝ տեղանքը հեղեղելու կամ ճահճացնելու համար։ Բացառիկ նշանակություն են ստանում տեխնիկական քաղաքական հարցերը և հիդրոտեխնիկական աշխատանքները (զորքերին ջուր մատակարարելը)։*

*Հետախուզության ժամանակ հարկավոր է վորոշել.*

1. Տեղանքի առանձին մասերը, վորոնք ամենից ավելի մատչելի յեն հակառակորդի առաջխաղացման համար։ Մատույցները։ Հնարավոր խափանումների տեղերը, յեղանակները և տեսակը։

*Տեղանքը գնահատվում է նրա անցանելիության և ռելյեֆի տեսակետից։ Այդ տեսակետից տեղանքը կարող է լինել.*

*ա) փակ, վոր նեղացնում է տեսածիրը, դիտողությունը և կողմնորոշումը (շենքեր, անտառ, թփուտներ լինելը այլն).*

*բ) բաց.*

*գ) կտրտված (թույլ կամ ուժեղ,—ձորեր, բլուրներ, հողաթմբեր. տեղանքի ծալքեր լինելը և այլն).*

*դ) հարթ։*

*Հակառակորդի համար լավագույն մատույցներ է տալիս բնական փակ ծածկը (կամ կտրտված տեղանքը), վորը հնարավորություն է տալիս հակառակորդին կուտակվել և ժամանակին թաքցնում է նրան վերերկրյա դիտողություններից. վատ մատույցներ է տալիս հարթ, բաց տեղանքը։ Խափանումների տեղերը պետք է ընտրել ամեն անգամ առանձին, նայած պարագային (թե ինչ հեռավորության վրա յե հակառակորդից, պաշտպանության վոր տեսակն է). սակայն, վորպես կանոն, նրանք պետք է ապահովեն ամենից վտանգավոր ուղղությունները (մանավանդ թևերը)։ Յեղանակները, խափանումների տեսակը և աշխատանք-*

*ների ծավալը կախված են տեղանքի բնույթից, ժամանակից, գոյություն ունեցող ուժերից ու միջոցներից և առաջադրու-թյուններից։*

*Եթե կան անտառներ և թփուտներ, կարելի է հաջողությամբ գործադրել փշալար, կազմել արգելապատ, կտրատել այն ծառերը, որոնք վայր կընկնեն քամուց, կածաններում տեղել անակնկալներ, գործադրելով ձեռքի նռնակներ, պարզ պայթուցիչներ կամ խողովակաձև փակիչներ և այլն։ Ճանապարհների վրա, առանձնապես նեղ տեղերում (կիրճերում), դրվում են ինքնապայթիչ ֆուգասներ կամ փորվում են ձագարներ և այլն։ Եթե կան ջրային արգելքներ, ականել նրանց հունները, շաղ տալ զանազան առարկաներ (փշալար, փոցխեր, գութաններ, մեխերով տախտակներ և այլն), ճահճացնել և հեղեղել։*

*Բաց տեղանքում կարելի է գործադրել սակավ նշմարելի լարափակոցներ՝ ա) ցածր ցցերի վրա դայթարանների տեղել, բ) թակարդներ, գ) փոխադրելի արհեստական արգելքներ — լարացանցեր և այլն. պայթեցման միջոցներից — ականներ և ինքնապայթիչ ֆուգասներ։ Եթե կան քիմիական միջոցներ — վարակել տեղանքը կայուն ԹՆ։ Ականային դաշտեր պատրաստելիս հաշվի առնել — 1 ական 1 քառակուսի մետրի համար։*

2. Ծածկված պլանշետի ճանապարհներ և մասույցներ մեր զորքերի առաջխաղացման համար, որոնք ունեն բնական արգելքներ *(գետեր, լճեր, ճահիճներ և այլն), արգելքները և նրանց հաղթահարելու յեղանակները։*

*Ուսումնասիրում են առաջընկած տեղանքը, գոյություն ունեցող արգելքները հարձակման անցնելու դեպքի համար և ծածկված այն ճանապարհները, որոնք ապահովում են թե զորքերի, և թե տրանսպորտի հաղորդակցությունը թիկունքի հետ. նշում են, թե ինչպիսի լրացուցիչ ճանապարհային, կամրջային, քողարկային և այլ աշխատանքներ պետք է կատարել, յեթե պահանջվի։*

3. Գնդակոծը յեվ ռմբածիրը խանգարող արգելքներ վերացնելու աշխատանքների ձևերը։ Աշխատանքների ծավալը *(վորոշվում է հեկտարներով)։*

*Հաշիվների հեշտության համար օգտվել № 6 աղյուսակից։*

*Անտառը և թփուտը մաքրելու աշխատանքների հաշիվն անելու ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր հարկավոր է թող-*

նել քաղաքներ մեր գյուղերի դասավորումը թաղցնելու համար (թաղարկ և չկտրտած, այլ միայն նստվածքած անտառի կամ թփուտի շերտը՝ 50—100 մետր խորությամբ և 300 մետր հեռավորությամբ, հաշվելով պաշտպանողական շերտի առջևի յեզրից)։

4. Դեսինը: Դետնի հատկությունից և կախված հողային աշխատանքների հաջողությունը և լրացուցիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը (պատվածք)։

5. Դետնային ջրերի մոտիկությունը: Դետնային ջրերի խորությունը վորոշվում և մետաղյա ձեռքի գչերների (бурав) ոգնությամբ։ Դետնային ջրերի խորությունը մեծ նշանակություն ունի հողային աշխատանքներ կատարելու ժամանակ, այլև զորքերին ջուր հայթայթելու համար, յերբ չկան լճեր, գետեր, ջրհորներ (արտեզյան ջրհորներ և աղբյուրները)։ Ինչպես ցույց և տալիս անցյալ պատերազմների փորձը, բոլոր կողմերով գերազանցորեն ընտրած դիրքերը հաճախ հարկ և յեղել թողնել-հեռանալ դետնային ջրերի մոտիկության պատճառով։

